«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄԱՅՐԵՆԻ

Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

1. Ո՞ր բառերի սկզբում ես լսում ձայնավոր հնչյուն: Ընդգծի՛ր դրանք (2 միավոր):

Եղանակ, ով, ոտք, էակ, օրեցօր, երեքնուկ, որսորդ, իջնել:

2. Ինչպե՞ս են կազմվել երկրորդ և երրորդ բառերը. դրանց նմանությամբ կազմի՛ր չորրորդ և հինգերորդ բառերը (2 միավոր):

Կայան, անտառ, առակ, ակոս, ոսոխ. (կարող են լինել այլ տարբերակներ. ամեն բառի վերջին երկու տառով կազմվում է հաջորդ բառը)

3. Քո զգայարաններից մեկի անունն է թաքնված այս բառերից մի քանիսում, գտի՛ր և ընդգծի՛ր դրանք (2 միավոր):

Անակնկալ, հյուրընկալ, ակնդետ, ձեռնոց, ականավոր, ոտանավոր, ակնթարթ:

4. Ի՞նչ անեմ, որ (2 միավոր)՝

(արև) ........................դառնամ ողջույն- բարև

(բուն)........................դառնամ թռչնի տուն բույն

(չղջիկ) ......................դառնամ Անի անունով աղջիկ

(այլուր) .................... կարողանամ հաց թխել ալյուր

5. Ավելորդին վտարի՛ր, վրան հանման (-) նշա՛ն դիր (2 միավոր).

Ուսադիր, ապուշ, ուշանալ, անուշադիր

Գաղտագողի, գաղթական, գաղտնի, գաղտնապահ

Երեսուն, երեքշաբթի, եռանկյուն, եռալ

Իջնել, վայրէջք, էջանշան, զիջել

6. Ի՞նչ բառով կանվանես (2 միավոր):

Ոչխար + ոչխար + ոչխար +200 ոչխար ու գառ= հոտ

Կով + կով + կով + 100 կով ու հորթ= նախիր

Ձի + ձի +ձի + 50 ձի ու քուռակ = երամակ

Ձուկ + ձուկ + ձուկ + 1000 ձուկ = վտառ

7. Հեքիա՛թ հորինիր փուտբոլի գնդակի և ճնճղուկի բարեկամության մասին, վերնագիրն ինքդ ընտրի՛ր (8 միավոր):

Գնահատման սանդղակ

| Միավոր | Նկարագրություն |
|---|---|
| 7-8 | 1. Ընտրել է գերազանց վերնագիր՝ պայմանավորված հեքիաթի բովանդակությամբ<br>2. Կիրառել է հարուստ բառապաշար:<br>3. Պահպանել է հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ:<br>4. Հանդես է բերել ստեղծագործական մոտեցում. հորինել է ինքնօրինակ հեքիաթ:<br>5. Ապահովված է հեքիաթի բարոյախրատական ենթիմաստը:<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ, վրիպակներ հիմնականում չկան: |
| 5-6 | 1. Բավական լավ վերնագիր է ընտրել:<br>2. Կիրառել է բավական հարուստ բառապաշար:<br>3. Պահպանել է հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ:<br>4. Դրսևորել է ստեղծարար մոտեցում. հորինել է հեքիաթ:<br>5. Ապահովված է հեքիաթի բարոյախրատական ենթիմաստը:<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական 2-3 սխալներ և վրիպակներ կան: |
| 3-4 | 1. Հեքիաթը չի վերնագրել:<br>2. Բառապաշարն աղքատիկ է:<br>3. Պահպանել է հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ:<br>4. Ստեղծարարություն չի դրսևորել. հեքիաթը ինքնօրինակ չէ:<br>5. Մասամբ ապահովված է հեքիաթի բարոյախրատական ենթիմաստը:<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական 5-6 սխալներ և վրիպակներ կան: |
| 1-2 | 1. Հեքիաթը չի վերնագրել:<br>2. Բառապաշարն աղքատիկ է:<br>3. Չի պահպանել հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ:<br>4. Ստեղծարարությունը և երևակայությունը բացակայում են:<br>5. Ուղղագրական, կետադրական, քերականական 7-8 սխալներ և վրիպակներ կան: |
| 0 | Հեքիաթը չի գրել: |